

## ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի  
ավագանու հերթական նիստի վերաբերյալ.

Համայնքը	Միջոցառման անվանումը	օրը	Ժամը	Անցկացման վայրը
Գեղասար	Ավագնու հերթական նիստ	06.04.2020թ	11:00	Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակ (գ.Գեղասար 3փ, 2 նրբ., թիվ 2)

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

**2020թ. ապրիլի 06-ին՝ ժամը 11.00-ին Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի**

**ժամը՝ 11.00**

**1.Գեղասար համայնքի ավագանու 2020թ. ապրիլի 06-ի 4-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:**

**զեկ. Վ.Գրիգորյան**

**2.Գեղասար համայնքի ղեկավարի հաղորդումը 2020թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին:**

**զեկ. Վ.Գրիգորյան**

**3. Գեղասար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:**

**զեկ. Վ.Գրիգորյան**

**4.Գեղասար համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:**

**զեկ. Վ.Գրիգորյան**

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
06.04.2020ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ  
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

---

*/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայնքի ավագանին, որոշում է .

Հաստատել Գեղասար համայնքի 06.04.2020թվականի 4-րդ հերթական նիստի օրակարգը.

1. Գեղասար համայնքի ղեկավարի հաղորդումը 2020թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին:
3. Գեղասար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
5. Գեղասար համայնքի ավագանու հաջորդ հերթական նիստի օրը որոշելու մասին:

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020ԹՎԱԿԱՆԻ  
ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

---

*/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի պահանջով Գեղասար համայնքի ավագանին տալիս է իր հավանությունը.

Գեղասար համայնքի 2020թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին, համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդմանը:

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ  
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. ՎԱՐԱԶԴԿԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 20-Ա որոշմանը, համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվող հանձնաժողովի եզրակացությունները՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է .

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի :
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Հավելված**

**ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու**

**2020 թվականի ապրիլի 06-ի N 17-Ա որոշման**

**ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

1. Մկրտչյան Հյաստան Կարենի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,
2. Սերոբյան Ալվինա Բարկենի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,

ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ \_\_\_\_\_ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

---

/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղասար համայնքի ավագնու հերթական նիստի օր նշանակել 2020թվականի մայիսի 18-ը: